



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

L60  
V845

# ՄՈՒԶԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1999

“**Սոր երդարան.**

ԺՈՂՈՎԵՐ

ԱՐԵՔԱՆԴԻՐ ԽՈՒԴԵԱՆՑ

1996.



Ավ կենդանութիւն կամ ենում,  
Հարկաւոր է օդ շնչէ.  
Ով փայելցութիւնը ցանկանում,  
Պարտական է երգ հնայի:

U. S.

Ա. ՃԱՀԱՅԻՉԵԱՆՑ-ԿԱՄՍՈԱՐԱԿԱՆ

SΦbjbII

Յպարանի Գլխաւոր Կառավարութեան Փոխարքային Կովկասու-

1873.

ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

Անդրադարձ պատ'

Անդրադարձ

Վահագին Արքայի կողմէ

Дозволено Цензурою, Тифлисъ. 6-го Июля 1873

Խառնած պատ'

Վահագին Արքայի կողմէ

4845-60

Ա Հ Ա Բ 3

Հ Յ Ա Բ





ՎԱՐԴՈՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ.

Օրկանք, բոնութիւն վատթար վարչութեան  
Ըերին մահն՝ ի դուռն այսց ազգութեան.  
Սահմանազրութիւնն եկաւ զայն վանեց,  
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ  
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ,  
Վեցցէ, Վեցցէ, Վեցցէ միշտ  
Եզն ու Սահմանազրութիւն:

Թնջեց ամենայն կարծիք անձնական,  
Խեղզեց ամենայն ձայն անհատական  
Հրաւեր կարդաց Աստուծոյ ձայնն,  
Եռաջնորդ լինել գործոց ազգայնն? ՐԱԴԱՐԱՆ:

Են որ Աստուծուն ձայն տուաւ մեղի,  
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.  
Վեցցէ, Վեցցէ, Վեցցէ միշտ  
Եզն ու Սահմանազրութիւն:

Հայերս անարգուած փրկեց բարձրացուց,  
Մարդկացին կոչման մեղ արժանացուց.  
Ենորհեց մեղի զոր ազատն Աստուծած,  
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:

Որուն շնորհիւ յարդ ստացանք մենք,  
Ենոր յարդ տալո  
Վեցցէ, Վեցցէ, Վեցցէ միշտ  
Եզն ու Սահման

Դուն ալ Հայաստան, սիրուն Հայրենիք,  
Ըլ այսուհետեւ մի սըգար լոիկ,  
Օք ալ քու որդիք նոր ոգուով բերկրեալ,  
Օքեղ հարս կուզեն տեսնել զարդարեալ:

Ալ մի լար մայրիկ, լացէ ՚ի պար փոխէ,  
Եւ ձայնիւ քազզրիկ որդւոցդ հետ երգէ,  
Կեցցէ, Վեցցէ, Պեցցէ միշտ  
Ծղկն ու Սահմանադրութիւն:

Հայեր, միանանք մեր մօրն հետ օրհնենք,  
Օանսննք որ մեզի տուին սուրբ օրէնք.  
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,  
Թաղղ վարեն ուրախ կեանք մի փառունակ:

Թաղղ և մեր որդիք հետ անոնց անուան,  
Ծիւրաւոր տարիք օրհնեն ու կարգան  
Վեցցէ, Վեցցէ, Վեցցէ միշտ  
Ծղկն ու Սահմանադրութիւն:

8. Գ. Սրբա մեան:

2

Մ Ո Խ Ս Ա Լ

Սրկածք Հայոց ժամանակին ընդ անիւ  
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.



1

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
1861, ՄԱՅԻՍ 24.

Արիք Հայկազոնք, յառաջ ընթանանք,  
Սահմանադրութեան նոր բարեւ մալ տանք.  
Որ ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,  
Վո՞ր հոգի, նոր կեանք Մնոր պարզեց:

Երկիք բարեկա՞մք, առ բարձրեալն Աստուած  
մեր մաղթանք սուրբ սրտէ բղիսած.  
է միշտ  
բութիւն:

1

Ունտեմք՝ ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ,  
Օ՞ն ա՞նդը՝ ի մէնջ այր ընկերին լարել գաւ:

Ալացաւ՝ ի մէնջ բաղդն անհամբոյր,  
Երդ նոր բաղդիս քաղցր է համբոյր.  
Եղբայր վեղբայր գգուէ սիրով,  
Շոխն աղքատին մատչի գթով:  
Հանց գիշեր՝ արդ առաւօտ,  
Ի ցող ժպտին Մասեաց արօտ.  
Եւ վառ՝ ի վառ շողշողելով,  
Լոյսն արեգին ծըփայ՝ ի ծով:

Հապա մանկունք,  
Վեհ քաջազունք.  
Ի զլուխ պըսակ,  
Ի յաղթանակ,  
Սոեալ նուազս,  
Ալաքս արագս.  
Օ՞ն փութացուք,  
Օ՞ն երգեցուք:  
Սէր և զութ,  
Մեր պըսակ.  
Սու մեր բաղդ,  
Հրաւիրակ:  
Ցնծասցեն,  
Որք լըսեն.  
Թէ՛ ուր Հայ,  
Զիք՝ անդ վայ:

Եղիազար Մէլքեան:

Ա Դ Բ Ա Լ Ի Բ Ա Ն Փ

Անի քազարին Հայոց, տո հայսկի ոմն, որ դնացեալ էր  
նմա՝ ի ահսութիւն:

Անի քազաք նստեր՝ կուլայ,  
Զկայ ըսոզ՝ մի՛ լայ, մի՛ լայ.  
Կըսես քիչ է, թո՞ղ, մնայ՝ լայ,  
Ալս, ե՞րբ լսեմ՝ մի՛ լայ, մի՛ լայ:

Ը ատ ցաւերով կայրիմ տապիմ,  
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ.  
Որ խղճալոյս գայ մօտենայ,  
Հէջ չի ըսէ մի՛ լայ, մի՛ լայ:

Ալս Հայ տղայ, խղճա՛ ինձի,  
Տես թէ քո Անին ի՞նչպէս է.  
Հերիք ես լամ դու չգթաս,  
Զէ՛, քո Անին ափսոս է:

Ալս ու վախով օրերս անցաւ,  
Լալէն աչքերս կուրացաւ.  
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,  
Բաղդս բնաւ զիս մոռացաւ:

Կորուցեր եմ թագաւորներ,  
Ժաղվեր եմ զլխուս քէօն բուվեր.

Որք միշտ կերպեն «Անին անցաւ,  
Անին անտէր աւերեցաւ»:

Անին եմ շատ մարդաբնակ,  
Անացեր եմ զառն աւերակ.  
Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ,  
Անտէր որբերու նմանակ:

Երբեմն էի շատ աննման,  
♦այսոց քաղաք Արևելեան.  
Աւերեր եմ սեփահատակ,  
Կյատեր կուլամ, ես միայնակ:

Եկար տեսար գարձեր կերթաս,  
Լալով կրսես գրարեաւ մնաս,  
Աստուած սիրես չմոռանաս,  
Մասիս սարին երբ մօտենաս:

Ըսես իմ քաջը Արարատին,  
«Սստեր կուլայ քո խեղձ Անին»,  
Կըսէ, երբ աւետիք կըտաս,  
Թէ՛ քմ Անի հերիք է լասօ:

Աղերամզր վ. Արարատեամ:

4

Երդ ՄԵՊԵՆԴՈՂ ՀԱՅՐԵՆԱՌԻՒ:

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,  
Բայց հանգիստ եմ ես հոգով.

Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—  
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անզի՞ն ընկեր,  
Չգնահատած ոչոքից.  
Բայց հաւաստեաւ անձնանըւէր  
Ազգիս մշակ կ'հաշուիմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանաս.  
Անդաւածան չերմ սիրով  
Ես սիրել եմ իմ այրենիք,—  
Գնա՛ և դու նոյն շաւզով:

Խեղձութիւնը այսոց ազգի  
Արեկցարար մտածի՛ր.  
Ոսկէ գրքցին Եղեշէի  
Քաջ աւաջնորդ քեզ ընտրի՛ր:

Այն տեղ սուրբ կրօն, ազդ միաբան  
Ազատ կամքով ու խիղձով:  
Այն տեղ Վարդան, անմահ Վարդան,  
Իւր խնկելի Քաջերով:

Այրենի՛ք,—սեղան սրբութեան—  
Ես Աստուծոյ առաջեւ  
Հատ կ'աղաշեմ, շատ կ'արտասուեմ,  
Որ ծագէ քեզ նոր արեւ:

Խմ մտերիմ, մահըս մօտ է,  
Ի՞այց հանգիստ եմ ես հոգավ.  
Որովհետև խիղճս արդար է,  
Ճշմարտութեան ջատագով:

Ա. Շահազիրիան:

## 5

Ա Կ Ս Ա Ն Ո Պ

(Թարդմանաւթիւն Գերմաներէնից)

Եայն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,  
Որ միշտ անկախ է,  
Որոյ տունը ամեն տեղ է  
Ի անփող ուրախ է,  
Ուսանողն<sup>1)</sup> է այն զըւարթ մարդը,  
Կինաց քեֆն<sup>2)</sup> է նորա ցանկացած բանը:

Եայն ո՞վ է արև ծագելիս՝  
Ինքնակը զարթում է.  
Ու քաղցր ձայնով երգելիս՝  
Փողոցներ չափումէ: Ուսանողն է, և այլն:

Ո՞վ երբէք սէրից չի վախում

1) Студентъ. 2) զուարթութիւն:

Ու միշտ հարս ունի,  
Եւ իր անձով, անպերձ կեանքում  
Դարդու հոգս չունի: Ուսանողն է, և այլ

Ո՞վ է միշտ առաջին կրովում  
Հայրենեաց համար,  
Փայլուն գինին շիշով կոնծում<sup>1)</sup>  
Ուրախ, բայց արդար: Ուսանողն է, և այլ

Եղբա՛րք՝ դուք որ այն ազգիցն էք՝  
Գինին պատուեցէք,  
Ուսանողական պատիւը  
Հաստատ պահեցէք:

Խրաւ մենք ենք այն զըւարթ ազգը, {կրկնէ:  
Կինաց քէֆն է ամենուս ցանկացածը:

Քերոքէ Տէր-Պետրոսեան Պատկանեանց:

## 6

Ա. Ա. Հ Ա Յ Ա Ս Ա Ն

Եռ ընկալ՝ ի գիրկդ մայրդ Հայաստան,  
Օորդիս քո սիրուն ցրուեալ աստ և անդ.  
Տես՝ ի՞նչպէս սիրովդ և քու կարօտովդ,

1) խմել:

Առուած բորբոքած քու տեսոյդ ցանկան.  
Արի կաց ուրիմն ով մայր Հայաստան,  
Նոր ողի զգեցիր փառօք անվախճան:

Օ՞ն զրահաւորիմք ո՞վ որդիք Հայիեան,  
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան,  
Օօրանանք սիրով և սուրբ միութեան,  
Ռլալ ախոյեան ընդդէմ թշնամեաց:  
Հապա՛ զործելու ժամանակն հասաւ,  
Հայրենասիրին կայ փառք անզըրաւ:

8. Փափազեան:

Պ. թ. Զ. Ա. Դ. Ո. Յ. Ա. Յ. Ե. Յ. Կ. Ո. Յ.

Եփուն քեզ Հայոց խեղձիկ ժողովուրդ,  
Յիր ու ցան ելաք անմեղ անխորհուրդ.  
Գերի զնաման աք դէպ ՚ի Խորասան<sup>1)</sup>  
Քաղցած ու ծառաւ, տըլոր թշուառական:

Խարիւր ու խազար ցաւի զիմացաք,  
Զեր քաղցրիկ երկրէն սոք դուրս չը դրաք,  
Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,  
Տըներն ու ժամերն ուրիշի տուաք:

1) Խապահան, Գարսից երկրու:

Են սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,  
Քաղցրիկ ջըրերն, ձեր շէն գեղերն,  
Ումն աք թողման դուք, որ գնաման աք.  
Էսպէս՝ կըլինի որ մոռանում աք:

Վ ախում ամ էնպէս մտքերնուցդ ընկնի,  
Էնչ քան որ ողջ աք մտքերնուդ ընկնի.  
Տարի ձեր որդւոց, թուանց պատմեցէք,  
Էսպէս խայրենիք քանդած թողեցիք:

Մասիսի<sup>1)</sup> անունն, «Սոյա տապանի,  
Արարատ դաշտի, սուրբ Խջմիածնի,  
Մեր Խոր Արքապի, սուրբ Գեղարդ<sup>2)</sup>, Մուղնի<sup>3)</sup>  
Չմոռանան մինչեւ ՚ի օրն դատաստանի:

Եւքըս կուրանար, շլենքս կտրուէր,  
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չը տեսնէր.  
Թաէ մէռած էր, ինձ երանի էր,  
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր:

Ստեփան վարդապետ:

8

Ա. Դ. Օ. Թ. Բ. Ն. Ա. Խ. Ա. Ր. Ա. Ր. Ա. Յ. Ա. Յ.

Ասուած ողորմած  
Տես մեր խղձութիւն, ջնջիր պարսից ոյժ, զօրութիւն

1) Արարատ բառն: 2) Գեղարդա-վանիք, նոյն է ՚իւ Այր Վանիք: 3) Մուրբ Գէորգի վանիք, որ նոյն նշանաբին նեւ

Օօրացրու Սամէլին՝ համողել Ա ահանին  
Որ քաջաբար  
Վանէ սոտիք, պահէ կրօնք.  
Սիրտ տուր Ա ահանին՝ օգնելով Հայ ազդին  
Թոյլ տալ Պապ արքային տիրել թագին.  
Ա ահանն անօրէն, թէ չ'գառնայ չարէն,  
Տուր Սամէլին սիրտ, քարողէ սէր ազգի, սէր կրօնի  
Նրա սրտումն տպաւորէ:

Ինչպէս քաջ Հանել հօրից վրէմն ազգի  
Ազատիր Պապին՝ կալ ժառանգի Հայ թագին,  
Հասցրու մեր ազդին իր հին փառքին.  
Բաւէ տէր, բաւէ, այս ի՞նչ մեծ ցաւ է.  
Ի՞նչի Ա ահան մեզ կ'գաւէ.  
Պահի՛ր մեզ միաբան լինիլ միշտ օրհնաբան  
Քոնսուրը անուան և գոհութիւն տալ յաւիտեան,  
Ապաքէն Աստուած  
Ոյժ տուր մեր տէար բաղկաց ընդդէմ կալ բռնու  
թեան  
Օտար ազգաց:

Գ. Ա.

9

Առաւոտեան քաղցը և անոյշ հովերըն,  
Մերձեալ հընչեն մեղմով թբիոցդքովերն.

Երդ ծածանին աշացս լրցեալ ծովերըն,  
Իացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ աննրման,  
Գեղըդ նրման արեգական վառվառման:

Քանի ողբամ՝ նոր ՚ի նորոյ խոցոտիմ,  
Ըզիայլուն գեղդ ՚ի միտ բերեալ բոցոտիմ,  
Յորդ արտասւոք՝ ցայդ և ցերեկ թացոտիմ:  
Իացի՛ր, և այլն:

Զեռն էանց՝ ես քեզ կարօտ մընացի,  
Այրիմ, տապիմ որպէս ՚ի հուր հընացի,  
Գեղ շատ օրեր ես ՚ի ձեռաց գընացի:  
Իացի՛ր, և այլն:

Տեսեալ զծաղկունս՝ զամէն ինձ փուշ վարկանեն,  
Թևօք բաղխեալ՝ զսիրտ իմ քնքոշ հարկանեմ,  
Ըզցաւ սրբուս ահա քեզ յուշ արկանեմ:  
Իացի՛ր, և այլն:

Երքայարանն Ի իւզանդիոյ մեծ շինի,  
Տեղ և բընակ յարմարեալ քեզ հարկ շինի,  
Եսաւակատեօք յիշատակ քո յար տօնի  
Իացի՛ր, և այլն:

10

Ս Ս Յ Լ Ո Ր Դ

Եհա՛ Սուրհանդակի սայլակը  
Ուղեղ ճամբով է դուրս թռչում.

Եւ Ա ալդայի տիսուր զանգակը  
Կամարի տակ է զօղանջում:

Ըրթուն Սայլորդաս զիշերուայ դէմ  
Իւր վիճակի վերայ տիսրեց.  
Եւ սիրեկնի աչաց կարօտը  
Եւ տիրագին ձայնով երգեց:

«Կապոյտ աչե՛ր, կապոյտ աչեր,  
Վըտրծիս կեանքը մաշեցիք,  
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար ոսոխներ  
Ինչո՞ւ սըրտերս բաժանեցիք:

«Մընաս բարեաւ իմ տուն հօրական,  
Մընաս բարեաւ իմ սիրեկան.  
Ես կը հանգչիմ՝ զինչ բոց կըրակին  
Եյս անբնակ դաշտի միջին:

Աչքերիս լցար խաւարել է,  
Եյս աշխարհումն էլ որբ եմ ես,  
Սրտիս կարօտը աղջկայ տեսնելից  
Մինչև ՚ի մահ զրկուած եմ ես»:

Եյս որ ասաց՝ շարժեց մըտրակը  
Երեք ձիանց մէջքին խըփեց  
Իւր սիրեկնի պարզ յիշատակը  
Եյսագէս երգով նա փարատեց:

Յաջառոյ ցըրակ ցույզան զէցը յ  
բանդը ցըրակ 44 պրունակը ու յ  
ցըրակ նույն ու ուղիր զայտին Օ  
ու ծառուս. Նի չ նկար բանածնի ները

Եկնապիշ, անձայն, խորհուրդ ձակատիդ.  
Պատանի՝ ուր ես մըտքով մոլորած,  
Եւրկ ու վրձններ ցիր ցան առաջիդ  
Վշեայ կըտաւը քու հանդէպ փրոած:

Ը ուռ տո՛ւր աչերըդ, նոյէ՛ դէս ու դէն,  
Տե՛ս քեզ ծաղըումն անմիտ ամբոխը  
Օչարթի՛ր, սիրելի, այդ անոյշ քընէն,  
Գառնէ մի անգամ հանէ քու ոխը:

Իայց գու ներումես նոյա վեհ հոգւով,  
Խուլ ես աշխարհի ոնայն շըշուկին. . .  
Յանկարծ աշերըդ փայլեց սուրբ շնորքով,  
Ճըսկայի սիրարդ թընդաց խիստ տժդին:

Եռիր վրձինդ, թաց արիր ներկով,  
Ը ունչ տուիր անշունչ կոպիտ կըտաւին,  
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,  
Քեզ անկարելին անցայտ է ք'աւիք»

Սէր, ատելութիւն, հանձար, բարկութիւն  
Տըւիր պատկերին մատիդ շարժուածքով,  
Ինչ որ չի յայտնեց ձարտարի լիգուն  
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով.

Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց  
Քու կենդանագիր պատկերի դիմաց.  
Օնկաչոք զմուռս ու հալուէ ինկեց,  
Դոչեց մեծաձայն «Դա է իմ Աստուած»:

Իսյց աշխ, քու անքուն ժամերու ճիզը  
Վրանի մի արծաթ հազեւ զին դրին.  
Ստեղծօղդդ գարձար քո խեղճ խըրճիթը,  
Եկեր շարեցին շուրջ քո պատկերին:

12

Ո.Ռ.Խ.ՕՏԵԱ.Ն. ԵՐԳ ՇԻԿԱԿԱՆԱՑ. 3.

Այ մարդ՝ այսօր շատ քընեցար նընջեցիր,  
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.  
Երեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,  
Ջերմութիւնը ձորն ու գաշտը փրուռեցաւ:

Բնկերներդ վաղ արտերը զընացին,  
Ցորեն գարին գերանդինով հընձեցին.  
Խուրճ կապեցին, բարդ բարդեցին գաշտումը,  
Նըստեն հմնզիլ կաղնիներու հովումը:

Այ մարդ՝ վերկաց սառը ջրով լուացուիր,  
Դատիդ կապէ, գերանդիդ առ գաշտ հասիր.  
Վրանի հովէ հունձրդ արա արտումըդ,  
Հունձրդ հընձէ, մի ծուլանար գործումըդ:

Հունձրդ կապէ՛, բարդըդ բարդէ՛, տուն արի,  
Հանգըստացի՛ր, երբ քո հունձրդ կատարի,  
Բնե՛ր գերանդիդ, կախէ՛ պատին քո տանը,  
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը:

Այ մարդ՝ հերիք ինչոր այսօր քընեցար,  
Աչքըդ մեկ բա՛ց, տե՛ս թէ ո՞րչափ ուշացար.  
Մեր զըրացին վաղ անցկացաւ կամուրջէն,  
Վաղ լըուելէ մեր զզիրը<sup>1)</sup> Զանելէն:

Ի՞նչ ես պառկել ի՞նչ ես քընել սիրական,  
Արեգական շողը հասաւ մեր զըրան.  
Մի՛ ծուլանար, ժամանակը խընայէ,  
Եմ պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

/ Ձ Ձ Ե /

13

ԵՐԳ ՈՒՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Երիք որ երթամք  
Սոխակաց երամք,  
Օաղիկ բացուհցաւ,  
Միշտ փառօք ցընծամք:  
Երի, գովիլի,  
Գովիլի լի լի, (երիցս):

1) Գիւղացիներու մէջ զիսաւորը, ստարօտ,

Օ՞աղկունքըն գարնան  
Սոխակ աննըման,  
Զայնիւ ցընծալով,  
Եղանակ բառնան:  
Արի՛, գովելի, և այլն:

Զայնիւ երգեսցուք,  
Սիրով գոչեսցուք,  
Եւ ՚ի դէմ վարդին  
Միշտ սատուտեսցուք:  
Արի՛, գովելի, և այլն:

Եւ մեք երգեսցուք,  
Սիրով գոչեսցուք,  
Եւ ՚ի ժամ զարնան  
Միշտ փառլս տացուք:  
Արի՛, գովելի, և այլն:

Եկայք սիրեսցուք,  
Օմիմեամբ փարեսցուք,  
Եւ հանդէպ վարդին  
Պարուք բերկրեսցուք:  
Արի՛, գովելի, և այլն:

Եհա՛, ցընծացուք,  
Եւ պարտէղ հասցուք,  
Դու միշտ ցանկալի  
Ե՞կ ուրախասցուք:  
Արի՛, գովելի, և այլն:

Եթ նեմաց ուսուն մայն անձուք  
Որ ասատել է իր ժողովուրդին  
Գինի գործածել  
Թէ չէ քրիստոնեայք ծարաւու կ'կոտորվէին:

Ըստուած բարի տայ Մահմեդին,  
Լաւ բան է մատածել  
Որ սաստել է իր ժողովուրդին  
Գինի գործածել  
Թէ չէ քրիստոնեայք ծարաւու կ'կոտորվէին:

Օրն մի շեշ խմել խրատում  
Բժիշկն կիպսոկրատ  
Ով այս զեղազրին հնազանդում,  
Կին է ոչ տղամարդ,  
Բայց իմ բարի խորհուրդն էն է մի գաւ դարդակել:

Ա արդապետ Լիւտերն ասէ  
Մի իմաստութիւն,  
Ով գինու համը չէ տեսել  
Ուղարկել գժատուն.  
Պատճառ բնութեան բարիքն արհամարհումէ:

Հայաստանին են պարտական,  
Ըմեն գինի խմող,  
Եյն տեղ Եղ նախահայր մարդկան,  
Քամել է խաղող:  
Երբ Երարատ սարից իջաւ ջրհեղեղեց յետոյ:

Գոհութիւն մատուցանեմ քեզ  
Բաքոս ծերունի,  
Եւ 'ի պատիւ քո դարդակեմք,  
Մի մի շեշ զինի,  
Որ մեղ առատ հունձ պարգևես օրհնեալ խաղողի:

15

Ի Մ Ե Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն Հ Ա Յ Ո Յ

Եհա հրեշտակ ոսկե փետուր թռուցեալ բարձուստ  
երկնածեմ  
Հայոց բաղդին հեծեալ 'ի կառս բարձր դոչէ  
զուարթագէմ  
Հզօր պատգամ,  
Դ վերուստ գամ.  
Միութիւն Հայք,  
Եւ նոր ձեղ կեանք:

Տրոփեն ուժգին և լանջք և սիրտ,  
Խաղայ արիւն 'ի թիւթ 'ի թիւթ.  
Մեղք կաթէ սուրբ սէրն 'ի խինդ,  
Եռաքինոյն 'ի Հայու սիրտ:

Սիրաբորբոք համբոյր բղիսեն,  
Երաստուաթոր աշկունք ցօղեն,

Երիք Հայկազունք,  
Ի սէր փութասցուք,  
Եռանգուն մատիք,  
Ի համբոյր հեղիկ:  
Տուք համբոյր մի ևս,  
Բացէք զձեր թես,  
Տուք համբոյր մի ևս,  
Սիրոյ է պարգևս:

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք  
Ենմահութեան սիրուն սերունդք  
Կեցցէ յաւերժ Հայկայ ոգին  
Մեղ են վկայ երկիր երկին:

Ենկաւ պարիսպ ժանտ նախանձուն ոչ 'ի շան  
թից ահարկու,  
Եյլյակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ կեն  
սատու.

Երկին երկիր,  
Կան 'ի յակձիռ,  
Ընդ Հայ ազգիս,  
Ռիւր հրաշալիս:

Բացցին անդունդք սեաւ անյատակ,  
Օածկել զբաղդին հին յիշատակ.  
Տիեզերաց բացցին մատեանք,  
Ենդէն գրումել Հայոց պարծանք.  
Կեցցէ Հայոց սէր պանծալի.  
Տերող փառաց նախանձելի:

Երեք Հայկազունք,  
Դ սէր փութասցուք ևայլն:

16

Ա. Ա. Հ. Ա. Ա Ս Ա. Կ

Ե՛մ Հայաստան Հայաստան

Ոչ քեզպէս բարեպաշտ կար,  
Ոչ վանքերիդ պէս վանքեր.  
Ոչ դաշտերիդ պէս դաշտ կար,  
Ոչ հանքերիդ պէս հանքեր:

Հողդ պազարեր՝ ազնիւ,  
Քարերը ողջ ակունք են.  
Գետերդ լեքն անթիւ,  
Վարմրախայտ ձկունք են:

Երինքը ծաղիկ հազած՝  
Եր հարսնացեալ օրիորդ.  
Եղջերուքը վաստակած,

Երգեացդ ամեն մէկն,  
Եր դրախտ Եղեմական

Հայց անբաղդութեան տէզն,  
Խզեաց լարըդ կենսական:

Ծնող՝ թշնամիք բերկին,  
Մեր աչաց արտասուքով  
Յուսում երկար չկ' մնան,  
Նրանք էլ ուրախ հոգւով:

Սասուած ամենագէտ է,  
Սնսահման արդարադատ.  
Սնաշառութեամբ գիտէ,  
Լաւին լաւ տալ, վատին վատ:

Ես եմ Եկյաթի կինն,  
Մագաթեան տոհմի Օսկին,  
Հայրենեաց կաթողինն,  
Հաւատացէք իմ խօսքին:

Տիկին Մադաթեան.

17

Ի շահարժական ԳԱՀՏԱԿ

Վ. Բ. Ժ. Պ. Պ. Պ.

Բամբա... որոտան բարձուստ բոմբինք,  
ՏԵրարատեան դաշտն՝ ի վայր.

1) Այս երգը առնուած է «Պանդոխտ» ողբերգութիւնից:

Երեարանց արիւնքյեռանդն առատանան ի հրազայր:  
 Հրաւէրք հայրենեաց հոչակին նդհանուր,  
 Հոգիք այկազանց բորբոքին ի հուր.  
 Որք երկնաւորին պատկին էք կարօտ,  
 Որք երկնաւորին վառաց երկնայրդ:

Ա'պ'օ'ն արի արանց մանկունք,  
 Այրենավրէժքդ այկազունք,  
 Ա'պ'օ'ն ի զէն դունդագունդ,  
 Յեռեալ ի պար թունդ ի թունդ  
 Դ զէն ի վրէժ, օ'ն անդր յառաջ.  
 Դ զէն ի վրէժ, մի' ձախ մի' յաջ  
 Օ'ն անդր յառաջ, մի' ձախ մի' յաջ,  
 Օ'ն անդր յառաջ, յառաջ, յառաջ,  
 Ա'պ'օ'ն, յառաջ:

Խաւական է մեղ մտաց զբաղմունքն,  
 Մենք ևս ունինք մեր համոզմունքն,  
 Աշուցն առաջ մեխած սովորել,  
 Բակ այնուհետեւ բաժակին նուիրել  
 Խմենք, եղբարք, զինի:

Աբ'ցցես դու Հ ստուած զինարբեցութեան,  
 Աբ'ցէ և քո զիւտ այժմ և յաւիտեան.

Յոդնած մարմինս դու զօրացնում ես,  
 Երբ պարապմունքից դադարում եմ ես,  
 Խմենք, եղբարք, զինի:

Երդէն նստոտած զինէ տաճարում,  
 Ուխտաւորները խմիչք են զոհ ըերում.  
 Կարմիր արիւնը նուիրական թասին,  
 Աաճելի է շատ մեր ծեր Բաքոսին:  
 Խմենք, եղբարք, զինի:

Աարկաւորէ շուտ ուխտատուն շտապել  
 Տասերկու ժամ ճիշտ կաթիլ չեմ ըմպել  
 Ծոմապահութեանս վարձը թող լինի  
 Մի շեշ Երասխայ վարդագոյն զինի:  
 Խմենք, եղբարք, զինի,

Հհա՛ թասերով զանգահարումեն,  
 Գինի պաշտելու մեզ հրաւիրումեն,  
 Ո՛վ պատարագին փոքր ինչ ուշանայ,  
 Մի լեք շեշ զինի պատիժ կ'ստանայ:  
 Խմենք, եղբարք, զինի,

Ուրեմն միմեայն ես եմ մնացել,  
 Որ աղօթատուն դեռ չեմ զնացել.  
 Երթամ համբուրեմ շուտով տակառին,  
 Սուրբ և անարատ Բաքեայ պատկերին,  
 Խմենք, եղբարք, զինի,

**19** ἦραντος τοῦ πατέρος τοῦ Καλλίπολης οὐδὲν  
τοῦ θεοῦ τοῦ πατέρος τοῦ Καλλίπολης οὐδὲν

Բաժակներ առնունք, եղբա՛րք,  
Լիք լիք բաժակներ զինով,  
Կարմիր ու ձերմակ զինին  
Մեղ լինի անուշ համով:

Ըերներիս տանենք անվախ,  
Զէ՛ դա խառնած կամ խարդախ.  
Կեկտար է և ո՛չ գինի,  
Խըլմենք, մեզ ամուշ լինի:

Արաքսայ ջըռով ցողած,  
այսց արևով հասած,  
այսց աղջիկ է քաղել  
Քընքոյշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին,  
Հայաստան արևիած Կոյէն,  
Հնմահ երկնային զինին  
Կա խմեց, երբ իջաւ արլէն:

Այս անոյշ զիմնին խմողը,  
Սրտէն թռ' գանէ ոկր,  
Ամէնքս էլ ասենք ամէն,  
Որ մեղի շատ տայ ամ ին:

20. *εγών τοι οὐδέποτε πάτερ μελανχολίαν είμαι σαντικός*

Գարունն է եկել նախշուն թեւերով,  
Կախշուն թեւերը պէսափէս ձեւերով.  
Գոյն գոյն ծաղեկներ՝ կարմիր ու սպիտակ,  
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:

Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,  
Օք ես քան զամեն եղանակ սիրուն.  
Սա անձրև ցոլէ առատ 'ի վերէն,  
Դա օրհնել տայ քեզ եկոր հաւերուն;

Ոսկի արևել փայլէ քեզ վերէն,  
Կենարեր հովք Փրչէ ՚ի լերէն.  
Եւս, աղնիւ զարուն, եղանակ աիրուն,  
Երդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տերէն

Պլասքարշ երթամ՝ ի պարտէզ այգուն,  
Ըստ ու վախ քաշեմ ես անդ օրն՝ ի բուն.  
Չկայ ինձ հանգիստ, ցնծութիւն պրիս,  
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անգորդ է քուն:

Սեռած պատանքած գետնին կեանք տուար,  
Տերևթափ ծառին ստուերախտ արար,  
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,  
Ինձ մենակ խղճիս էսաէո մոռագար:

Առաջ գնա՛, գարուն, դէպ 'ի հիւսիսն 'ի խոր,  
Գնա՛, կանանցուր գու անդ սար ու ձոր,  
Որոց անհամբեր քեզ կան՝ առւր բարե,  
Քո ուրախ գալստեամբ նոցա զուարձացուր

Կուգաս գալ տարի՛, դու ինձ կու գտնես,  
Ո՛չ 'ի մեր այգին և ո՛չ 'ի պարտէզ,  
Եօլ անզարթ քընով հողի տակ պառկած,  
Գերեզմանսքար մի վրաս կը տեսնես:

21

## Ա Ր Մ Է Խ Ո Ւ Հ Խ Ա Ր Ի Վ Ճ Ա Ր Ա Խ Ա Ր

Գեղեցիկ Սրմենուհի, դու իմ սրտիս հատոր,  
Ո՛չ, ինչ խորհրդաւոր է քո սէրի կոչումն,  
Տ զուր ես գասում անձդ տղամարդերիցն ստոր,  
Քեզանից է սպասում Հայն իր վերահնչումն:

Ենտանեկան կենցաղում իրաւունքի տէր ես,  
Եմեն մի մաստան տան՝ քեզ պատվում մեծարում:  
Եմուսնական վիճակում մտերիմ ընկեր ես,  
Օրինակ ես գողութեան ամենայն աշխարհում:

Թագիդ վերայ մի ակը չի երևում «չկայ»,  
Որ տայ Հայ տանտիկոջը առանձին շքեղութիւն,

Քեզ վայել է ներկայում մի այլ նոր առարկայ,  
Լուսաւորութիւն ասեմ; ո՛չ, լուսաւորութիւն:

Միմիայն թէ քո Հայկական մտաց արշալոյսն,  
Պէտքէ Մասեաց գագաթից իր ծագումն առնի.  
Խորթ ուսմունքներից չ'կայ Հայ մայրութեան յոյսն,  
Եւս անոյշ մահագեղն բնաւ գեղաթափ չունի:

Սրմենեան քո ծնունդը ձեռը ծնոտին լալիս,  
Սրձակի՛ր կրթութիւնդ խաւարի հապանքից.  
Ով որ մարդկային ազգին կեանք ու մնունդ է տալիս,  
Հզգայնութիւն նմանապէս կ'ծնանի նորանից:

Մ. Փ:

22

## Ի ՀԱՆԴԻՍԻ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՈՐԾԵ ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ (Կ. Պոլոյ)

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ,  
Օայն ողջունելու ելքք Հայ զաւակք.  
Ենցան սև օրեր, օրեր մահաչոտ,  
Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ.  
Մահանագրութիւնն ուղղեցոյց կենաց,  
Սիրոյ գրօշակով եկաւ զարդարուած:  
Որ փայլ Սրմ սուրբ Հայաստանի,  
Որ Հայ ազգութիւնն փառօք վերածնի.

Վեցցեն անձնուէր որդիք Հայկազունք, մասի թէ Վ  
Վեցցէ, Ըզգային Աահմանազրութիւնը:

Կաթիւ մարտասուք հեղունք անհախանձ, Ս  
Ե սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց:

Կաթիւ մի քրտինք հեղունք անխնայ, Տ նպաստ Ըզգիս յուսոյն ապագայ.

Եւ ոչ իսկ իննայենք բոլոր մեր ձգունք,  
Կրօնի Հայրենեաց և Ըզգի սիրոյն:

Որ փայլե՛ Արեւ... և այլն:

Հայեր, միանանք, կ'ընենք առաթուր,  
Ըմէն ուժ և նենդ, պարհսպներ ամուր.

Երկինք զայս մեր սուրբ կօրհնէ Միութիւն,  
Տ Աստուած Գրիփորի զօրավիգ արթոն.

Հապա խրախուսինք, կուրծք տանք անվիշեր,  
Ծնկճենք կործանենք, ամեն արգելքներ:

Որ փայլե՛ Արեւ... և այլն:

Ունիմք սիրտ արի, ողի եռանկուն,  
Ժառանգ մնացած բազուկ աննըկուն.

Դարերու յաղթող Ըզգի զաւակ ենք,  
Ըմէն նախատինք օն փութով ջնջենք:

Ծնմահ Հայութեան կանդնենք յաղթանակ,  
Հայոց մօր ճակոին հիւսենք պերճ պսակ:

Որ փայլե՛ Արեւ... և այլն:

Հայութեան առաջակա ա. Պ. Պ. Փափաթեան:

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն  
Եկեալ աստ զամբիւղօք ՚ի Հայոց երկրէն,  
Յուսամ, զի Հայ տիկնայք և պարնայք Հընդկաց  
Բարձր զին տայցեն իմ սիրուն զամբիւղաց,  
Ըս զամբիւղ Յ) յօտար աղջկանէս:

Օ Երարատ, զԵփրատ և զՏիզրիս թողի  
Միայնակ շրջիմ աստ յեղերս Գանգէսի,  
Պանդոխտ եմ, օգնեցէք անտերունչ անձինս,  
Օք ծնողը ձեր յառաջ աստ պանդոխտ էին,  
Ըս զամբիւղ... և այլն:

Օ ամբիւղք իմ են յարմար ասղնագործութեան՝  
Պահել անդ զմատնոց, զթել զասղաման.  
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,  
Երբ խաշենք և զառինք իմ զինե խայտան,  
Ըս զամբիւղ... և այլն:

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ  
աշխարհի,  
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում  
երկրի,  
Օ այգի մի ունէի զամբիւղ գործէի,  
Լոկ կաթամբ և պտղով երջանիկ էի,  
Ըս զամբիւղ... և այլն:

Աստ սերկելիլ, ծիրան և խաղող չե կայ,  
Բայց միայն ադայ, բիլայ ու քիլայ  
Ե՛մ, ե՞ր իցէ, զե արժանի եղեց վերըստին  
Դաշտիկել զպառւզս իմոյ պարտիզին,  
Եռ զամբիւղ... և այլն:

Ապա գուշք լաւ կանայք՝ զամբիւզս իմ առէք,  
Դիւղական աղջկանս սիրով օգնեցէք.  
Օք դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր  
Հնորհօք՝  
Օք երախտիս ձեր առեալ՝ գովեցից բազմօք:  
Եռ զամբիւղ... և այլն:

Մ. Թաղիադեսանց:

Ելէք, ելէք, օն գուք աստի,  
Հոգ, անձկութիւն ու տագնապ,  
Եկէք ծիծաղք և խաղք մեզի,  
Հաճոյք գոլով սիրոյ կապ:  
Չպակասեն զբօսանք մեզմէ,  
Կարեոր բան մ'ալ այն է,  
Օքս հրաւիրող ամէնքդ հոս,  
Չեր եռանդն այս մեծ է:

Էայց պէտքէ խորհիք մոտածողք,  
Ծաէ ինչ ձեր բաղտն որոշեց,  
Միշտ սիրեցէք ու բաւ է,  
Չեզ երջանիկ այն կնէ:

Դէ, սիրոյ համբոյր տուէք արդ,  
Եյդ թող լինի մեզ սուրբ զարդ,  
Հայոց համար այսպէս պիտի,  
Որ նոցա եռանդն զարթի:

Միշտ յիշեցէք ձեր նախնիքը,  
Եմուր պահէք այն պարտքը,  
Որ միշտ հնչուի ձեր ականջին,  
Հետևեցէք այս դարին:

Ի ՀԱՆԴԻՍԻ ՀԵՐԵԲՈՐԴԻ ՏՈՐԵԳԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱ-

ՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին,  
Ենր գարուն բերաւ Հայաստան երկրին.  
Իջաւ յԵրարատ՝ հասաւ՝ ՚ի Տիգրիս,  
Դարձաւ դաղբեցաւ կեցաւ ՚ի Մասիս:  
Եւ ձայն տուաւ անիէ Հայոց,  
Չայն մի թորգոմայ որդւոց:  
Որ մերկանան զցուրտ ձմռան վարագոյր:

Ժամէ արդ ։ այեր,  
Բնկեր առ ընկեր.  
Տամք սիրոյ համբոյր:  
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան,  
Սահմանադրութեան:

Եւ շեջելափառ ։ այրենեաց խորան,  
Բացաւ տիսրագին զիւր քող ճպնութեան.  
Հասին հոն Առուսյք, և Յուսոյ հրեշտակք,  
Ըսործ երգեցին խնդութեան նուագ:

Եւ սիրոտ տուին անկէ ։ այոց,  
Ալիրոտ մի թորգոմայ որդւոց:  
Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր:

Ժամէ արդ ։ այեր,  
Բնկեր առ ընկեր.  
Տամք սիրոյ համբոյր:  
Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան,  
Սահմանադրութեան:

Ելաւ ։ այսատան նոր գարնան ՚ի տես,  
Դարձա ՚ի շքեղ իւր փառաց հանդէս,  
Դարձիր բաղդակոծ Քնարդ իմ հոգւցն,  
Դարձէք աւուրք կենաց, դարձէքյայդյուսոյն:

Եւ լոյս տուէք անկէ ։ այոց,  
Լոյս մի թորգոմայ որդւոց:  
Որ մեկանան մուժ զիշերին վարագոյր:

Ժամէ արդ ։ այեր,  
Բնկեր առ ընկեր.  
Տամք Ալիրոյ համբոյր:  
Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան,  
Սահմանադրութեան:

## 26

Երկու զրենագեր զնումէին Փրանսիա,  
Որ գերի էին հիւսում ընկած<sup>1)</sup>.  
Եւ երբ որ եկան, հասան Գերմանեա,  
Ընտեղ թեքեցին զլուխներն վաստակած:

Եւս տեղ լսեցին այն տիսուր վէպքը  
Թէկ նոցա սիրուն Փրանսիան կործանուած,  
Յաղթուած ու ջարդուած քաջազուն զօրքը,—  
Եւ կայսրը, կայսրը<sup>2)</sup>, թշնամուց գերուած:

Եսքա միասին լաց էին լինում;  
Եսդ արտասուելի լսելով լուրքը.  
Վայ, ասաց մինը, «ի՞նչպէս է ցաւում,  
Ի՞նչպէս է այրում, ա՞և, իմ հին վերքը»:

1) Ռուսիայում; 2) Այսինքն Նապոլէոն առաջինը:

Երկրորդը ասաց. «վերջացաւ բանը,  
Եւ ես կամէի քո հետ մեռանիլ,  
Ի՞յց կին ու զաւակ թողել եմ տանը.  
Եռքա առանց իմ կարող են կորչել:

«Ի՞նչ փոյթէ ինձ կինս, որդիքս ի՞նչ փոյթեն,  
Սրտիս բաղձանքը աւելի լաւ է.  
Թաղ գնան, հաց մուրան, եթէ սոված են,—  
Կայսրը, իմ կայսրը գերի տարած է».

«Ատարի՛ր, եղբայր, իմ մի խնդիրքը,  
Եթէ ես այժմ մեռնիմ այս երկրում,  
Տա՛ր դէպ ՚ի Փրանսիա դու իմ դիակը,  
Թաղի՛ր ինձ այն տեղ Փրանսիայի հողամաս:

«Կարմիր թելից կախ պատուանշանը, ցող պատուանշանը,  
Դի՛ր դու քո ձեռով իմ քաջ սրտի վրայ  
Եւ աջ ձեռու տուր իմ հին հրացանը,  
Եմկ իմ սուլս կապի՛ր մէջքիս վրայ»

«Եւ այսպէս պարկած, ականջ կը զնիմ,  
Ի՞նչպէս պահապան, գերեզմանումը,  
Երբ թնդանօթի որոտը լսեմ,  
Եմկ խրխնջող ձիերի արովը:

«Եւ կայսրը կ'անցնէ իմ վերայ ձիով,  
Աը շառաչեն սուրեր, և նոյն բռպէին  
Իմ գերեզմանից դուրս կըգամ զէնքով,—  
Եւ կը պաշտպանեմ կայսրին, իմ կայսրին»:  
Թարգ. Գ. Բարիսուդարեանց:

Ե Բ Ա Զ.

Ես լսեցի մի անուշ ձայն,—  
Իմ ծերացած մօր մօր էր:  
Փայլեց նշոյլ ուրախութեան,  
Ի՞յց ափսոս, որ երազ էր:

Վարկաչահոս աղքիւր այն աեղ  
Թաւալում էր մարգարիտ.—  
Ես յատակ էր որպէս բիւրեղ,  
Եմն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեղին տիսուր, մայրենի  
Յիշեց մանկութեան օրեր.—  
Մօրս համբոյն ես զգացի,—  
Ե՛ւ, ափսոս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտագին.  
Աչքերս սրբեց շատ թաց էր,—  
Ի՞յց արտասուք զնում էին  
Ե՛ւ, այդ, ինչու երազ էր:

Ս. Շահնալիպեանց.

Ը Ս Տ Վ Ա Կ Ի

«Գիւղական աղջիկ եմ ես» տաղին.

Ես տապան նստեալ՝ ի գագաթ սարին,  
Խբրեւ պահապան ծայոց աշխարհին,  
Գիշեր և ցերեկ կոչեմ և ողբամ,  
Խոկ ծայք զիս թողեալ,.....

Ո՞ւր է ծայ, ո՞ւր է ծայ, ո՞ւր է ծայ,  
Որ ասէ՝ վայ, վայ:

Օխս թողին անտէր, եղեն ցիր ու ցան,  
Հայաստան մնացած այլոց ապաստան,  
Թշնամիք զնա կոխան արարին,  
Վեմք հիման նորա, տե՛ս, թէ ո՞ւր հասան:

Ո՞ւր է ծայ, .. և այլն:

Երուսեակ բաղտիս յանդունդն իջաւ,  
Ճրագ փառաց իմոց ՚ի հողմոյ շիջաւ,  
Որդիքն իմ՝ նման անմռունջ գառանց,  
Ի սպանդ մահու տարան դահիճաւ:

Ո՞ւր է ծայ, .. և այլն:

Գրաբունն իմ կորոյս զիւր տաք եղանակ,

Չեքեր զշուշան, վարդ և մանուշակ,  
Աէյեաթ, արիւն իմ սառուցեալ մնաց,  
Օք ո՛չ ծագեցին լուսին, արեգակ:

Ո՞ւր է ծայ, .. և այլն:

Պ. Տ Վ Յ. Մարաթեանց:

ՈՒՍԱՆՈԴ:

Երբ որ հողեց մարդ դարձայ,  
Երբ Աստուածանից հարցայ.  
Թուէ՝ ի՞նչ վիճակ ես ուզում, { կրկնէ:  
Ասի՝ ուսանողութիւն: { կրկնէ:

Աստուած ուզեց զարդարել  
Ինձ, զիպայ շորեր կարել.  
Ասի՝ էս դու կանանց տուր,  
Ինձ մի նըշանա զգեստ տուր:

Կապտածըղեկ գրգակ տուր,  
Մէջքս կապէ՛ հատու սուր,  
Մառանումըս լաւ գինին  
Թօն'ղ միշտ անպակաս լինի:

Իմ սիրելի նազելին  
Մնայ ինձ միշտ հաւատարիմ:

Փըղըշտացի ախոյեան՝ բրախ մահացը սկզբ  
Տե՛ս՝ իմ սուրբն է իմ պաշտպան:

Ովչի իլել ուսանող՝  
Լա՛ւ է, որ մընար միշտ հող,  
Քանց Աստուծոյ լոյս արեւն  
Ունայն տեղը վայելէր:

Ովչի կոնծել երգելով,  
Ընկերաց հետ պաշուելով,  
Նա չը դիտէ ցընծութիւն,  
Եղուկ սըրախն, վայ հոգյն:

Ովչի երդուել ընկերաց  
Պաշտպան լինել հայրենեաց,  
Վ երջի արիւնը թափել,  
Հայրենիքը պաշտպանել:

Լնապէսն մեղնից հեռանայ,  
Լոյս աշխարհից վերանայ.  
Թօն' ում ուղէ կարգն ընդնի,  
Մեր մէջ նա թողչի մըտնի:

Ո. Տ—Գ. Պապկանեան:

Քաջ Հայոց կերպի կոնծեցէ՛ք,  
Բաժակները դարդը կեցէ՛ք։  
Մեր Հայ ազգի կենացը։

Հայոց երիտասարդներուն:  
Հայրենիք պաշտպանողներուն,  
Որոց անկումն էլ սուրբ է մեզ—  
Այս բաժակը նըւիրենիք։

Հայ աղջեկներու կենացը,  
Որք միայն Հայ մարդ կու սիրեն,  
Սիշտ իրանց մաքուր կու պահեն,—  
Այս բաժակը դարդը կենիք։

Առանց, որ մեր սիրտն զրաւում են,  
Մեղ զգօն ձամբով վարումեն,  
Որոց կեանքը մեղ օրինակ,—  
Մի երրեակ գիւցցէ ասենք։

Եղբարք, որք այժմ աւարտել են,  
Մեր ուխտի անդամ եղել են,  
Որոց ուխտը միշտ սիրում է.—  
Այս բաժակը նըւիրենիք։

Եղբարք, որք գարդից ազատեն,  
Ասհուն հանգիստ վայելում են,  
Ողորմի հոգուն ասելով՝  
Այս բաժակը նըւիրենիք։

Բայց որ դեռ գինին փայլումէ  
Ու մեզ իրան մօտ կանչում է,  
Բաժակներըդ դարդը կեցէք  
Բոլոր ձայի կննացը:

31

ԶԵՅԹՈՒՄ ԵՐՊ.

(Թարդմանութիւն)

Օխնւորիս երգերը եղարք լսեցէք,  
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք:

Մէկն ունի մեծ աներ, միւսն գիւղ ունի,  
Միայն խեղճ զինւորը ոչինչ բան չունի:

Ծորերը թանկագին, փորը միշտ քաղցած,  
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց:

Թու քաջ պատերազմէս կ'տան մեծ պարգև,  
Թու սոքդ կորցնես, կ'ասեն մնաս բարեւ:

Ուր գնամ ես մենակ աշխարքիս վրան,  
Ահա քեզ լաւ վաստակ քսան մէկ ատրուան:

Գ. Գողոխեանց

32

Ե Ր Գ

Օչչթ'ուն, անկախ դու աշխարհիկ  
Քո սար ու ձոր են անսառիկ  
Եմեն մի քար և անկիւնդ  
Հաղախել է քո արիւնդ:  
Ճէլէ, հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ:

Դեռ ևս քո զօրեղ բազկում  
Ուուբենեաց երկիրն է շարժում,  
Յիշատակ նախնի դիւցազանց  
Պատկերն է քո քաջ զաւակաց:  
Ճէլէ, հէլէ.....

Մզրախտ է ունեցած կայքն  
Քո ապրուսան է և քո կայքն  
Բունութեան լուծն թուրք մարդու  
Էտ զէնքով ես թութափել դու:  
Ճէլէ, հէլէ.....

Վհցէ Գրիգորեան հաւատը  
Ճայ պահել իւր ժողովուրդը,  
Ոչ մի կրօն աշխարհիս վրայ  
Չունի ապատ ոգին սորաւ:  
Ճէլէ, հէլէ.....

Ա. Դ. Է Ն Տ Ա Շ Ն Ե Կ .

(Թարգմանութիւն)

Օարմանք բան է, հենց գիտենաս,  
Եղեք տանը չեն նըստում.  
Իսկի չելաւ վուր մի դրանիմ  
Եղալօին իր տընում:

Մի՛ արմընա, պարուն Սարգիս,  
Էս աշխարքի աղաթին,  
Իշխանք գանա, դու խաբար չե՞ն,  
Վուր քասիրին կու ատին:

Ե՛ռ օրինակ, թէ մեծավուր,  
Վպակետները ուսին,  
Գոյ գըռան մօտ, հարցն է աղին,  
«Տա՞նն է».—տանն է, կոսին:

«Եղրա էդնից մի փէշաքար,  
Ելի էն նօքրին հարցնէ.  
«Տա՞նն է աղէն» կրնծին տալով  
Խեղճին իսկոյն դուս կօնէ:

Թաէ աղի մօտ լաւ շուրերով  
Կուգաս՝ տանը կու գըթնիս.  
Վայ թէ չուխէդ հընացած է,  
Լաւն էն է, տուն չի մըտնիս:

Թաէ սալօպով աղջիկ պարոն  
Կուգայ՝ թող ներ հրամայէ,  
Թաէ զաթիբով պառաւ ձալօն  
Հարցնէ—կոսին տանը չէ:

Թաէվուր ձեռիդ քիսա բըռնած,  
Պարոնին փուղ բերիլիս,  
Փառք ու պատուով ներ մըտնումիս,  
Դվիսի վըրայ տեղ ունիս:

Թաէ դուքանդար իս, հիսարով  
Փուղի էդնից իս էկի,  
«Տա՞նն է աղէն» կոսին հալա  
Ժամիցը տուն չի էկի:—

Իս է հիմիկուայ աղաթը—  
Առ' ւղիս ջեղից տըռաքի',  
Թաէ քասիր իս, ջուրը ընկի',  
Թաէ զօշախ իս՝ տուն մըտի:

Ու. 8—9. Պատկանեան:

Ե՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,  
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.

Մեր ամենիս դու մայր էիր զթառատ,  
Երդ հեռանաս, մեղ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անդամ,  
Լուանայիր, դեղ դնէիր ամէն ժամ,

Քո մագերից ոլորէիր վերակապ  
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր ազապ:

Երդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,  
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,  
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,  
Վրաստանը բուրէ հոտով քաղցրավեց:

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,  
Մեր սիրտ հոգին քեղ հետ տանիս մաքրուհի.  
Գնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեղ ընկեր,  
Եջն ու խաչը քեղ պահապան զօր գիշեր:

Յարինեանց:

Հզձայն մանկանց, ո՞վ տէր Յիսուս  
Լուր, որոնց դու միայն ես յոյս.  
Էջ, երթիցուք քո 'ի սեղան  
Եւ 'ի սրտիցս զբազմարան

Քեղ ծառաւեալ ողիքն մեր,  
Երբո՞նոցա անուշ քո սէր.  
Լուր մեղ Յիսուս, լուր զմեր ձայն,  
Դու զազգս օրհնեա և զվարժարանա:

Տես, տէ'ր, մտաց մեր զխաւար  
Եւ լոյս ծագեա' քո հոգեվառ.  
Տես զի ախտից 'ի սիրտ մեր լոյս  
Յառաքինի ՚ի ջանս եմք թոյլ  
Տուր մեղ զշնորհս քոյին հզօր  
Օչ մի կրից պարտ եմք մղոր:

Լուր մեղ, Յիսուս  
Լուր զմեր ձայն,

Դու զազգս օրհնեա և զվարժարանա:

Տուր մեղ յաղօթս յուսումնեռանդ,  
Օչ մեր տեսչաց լիցուք հնազանդ:  
Դու, տէ'ր, զնոսա ջնջեա'յ զքիրտ.  
Լեր մսիթար նաւոյն ՚ի սիրտ.  
Պահեա' զնոսա ամեն չարեաց  
Եւ զվաստակ օրհնեա', Յստուած:

Լուր մեղ Յիսուս  
Լուր զմեր ձայն,

Դու զազգս օրհնեա' և զվարժարանա:  
Յիշեա', Յիսուս, և զայաստան,  
Օսր հարցն մեր ետուն կայս:

Պահեա՛ զնոսա և աչք քո տէր  
 Եւ ցրուեալքս մի բերցես՝ի սէր  
 Եւ զհեռ, զքէն մերժեալ՝ի սպառ,  
 Տուր համբուրել եղեայր զեղեայր:  
 Ո՞չ, ե՛րբ Յիսուս  
 Ե՞րբ լիցի այն  
 Երբ լուիցես } 2.  
 Մանկանց զձայն:

36

Խաղաքական պահանջման մասին

(Թարդ. Գերմանիկունից)

Թաէ ծխաքաշը ձեռիս  
 Սենեկումքս նատած եմ,  
 Քըթիցս ծուխս հանելիս  
 Կարծում եմ թէ՝ իշխան եմ.  
 Երբ քամին ծուխըս փչի,  
 Ես պինդ ծիծաղում եմ,  
 Ասում եմ՝ մեր գործերը  
 Էսպէս անցաւոր են:

Եզնիւ խոտ՝ դու զօրութիւն,  
 Կեանք ու ուժ ես ինձ տալի,  
 Եշ կարնայի քեզ գովել  
 Խնչքան սիրտըս է տալի.

Ո՞վ երկինք՝ տուր էս խոտին  
 Դու արե և անձրե շատ,  
 Եւ սորս մըշակողին  
 Օրհնութիւն, կեանք ու բաղդ:  
 Մենակութեան ժամանակ  
 Դու ինձ լաւ ընկեր ես,  
 Թաէ իմ սիրտըս նեղանայ՝  
 Քեզ կ'առնեմ ես ձեռըս:  
 Թանկ ես, Թառւրքի ծրխտխոտ,  
 Վարուստներու բան ես,  
 Վոգիսէլ տամ՝ քեզ կ'առնեմ  
 Ու կ'ածեմ գրքանըս:  
 Խնչքանէլ դատարկ լինի  
 Փողերիս քրսակը,  
 Պէտքէ անպակաս լինի  
 Բերնիս ծրխաքարշը:  
 Ուսանո՞վ ա՛ռ ծրխաքարշը,  
 Ըուտ կ'անցնի քու կեանքը,  
 Ու ծխելով միտք արա՛,  
 Ունայն է աշխարքը:

37

Խճջ ՀԱՄԱՐ ԶԼ'.

Խնձ համար չէ՛ գարնան գալը,  
 Խնձ համար չէ՛ ծառի ծաղկելը,

Աւրախութեան սրտի զրդիոը,  
Ա՛չ մի բերկրանք չ'են ինձ համար:

Ինձ համար չէ կենաց բաղդը,  
Ինձ համար չէ երջանկութիւնը,  
Եւ մրայօն կուսի աշերը,  
Սոցա արցունք չ'են ինձ համար:

Ինձ համար չէ փայլուն լուսնի  
Մնտառ ու սար լուսաւորելը,  
Պարնան վարդի երգչի տաղերը,  
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ բարեկամաց  
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,  
Օատիկ օրուայ ուրախ ասելը  
«Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար:

Բայց, ինձ համար կու գայ ժամը,  
Կ'երթամ թշնամեաց պատերազմը,  
Եւ մահառիթ սպանիչ զընդակը  
Մնդ պատրաստած է ինձ համար:

Ք. 8—Գ. Պատկանեան:

Խմ սիրելի զաւակունքս,  
Ալ թափառին օտար աշխարհ.

Ես ո՞ւր դիմեմ; ո՞ւր փնտռուեմ,  
Եկայք որդեակք իմ;  
Չեր մօրն այցելութեան:

Դարեր անցաւ լուր մը չառի,  
Դմքաջերըս մեռան կորան,  
Կուլամ արիւնըս կը սառի...  
Մէկը չ'ունիմ տայ ինձ դարման:  
Եկայք որդեակք և այլն:

Ըրիւնս ցամքած, սիրալս մաշած,  
Մէմքս է տիսուր մինչ յաւիտեան,  
Եւ կարօտյն իմ որդեկաց,  
Պիտի իջնեմ սև գերեզման:  
Եկայք որդեակք և այլն:

Եւ դու հօվիւ թափառական,  
Կերգես տիսուր 'ի մէջ հօվտաց.  
Ե՛կ արտասուենք թանկ կորստեան,  
Տիսուր մահուտն մեր որդեկաց:  
Եկայք որդեակք և այլն:

Խսկ դու կռունկ իմ այրենեաց,  
Գնա՛ հեռու աչքէս 'ի բաց...  
Յետին ողջընս տար զաւակացս,  
Օ՛կ կեանքիս մէջ յոյս է մեռած:  
Եկայք որդեակք և այլն:

Ե Գ Յ Ա Յ Ր Ե Մ Ք Ա Մ Ե Ք

Ե բիւր ձայնից բնութեան շքեղ,  
Թմէ երդք թռչին սիրողաբար,  
Մատունք կուսին ամենագեղ,  
Թմէ որ զարնեն փափուկ քընար:

Չունին ձայն մի այնքան սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Տո'ւր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք,  
Որ մրորկաւ էինք զատուած,  
Հազդին ամեն ոխ չարանենդ,  
Ե մի համբոյր ցրուին 'ի բաց:

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալեոր Մայր այաստան,  
Տեսնէ զորդիս իւր քովի քով.  
Սրաին խորունկ վէրքըն դաժան,  
Քաղցր արտասուաց բուժին ցողով:

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկ տեղ լացինք մենք 'ի հընում,

Եկէք դարձեալ յար անբաժան.

Խառնենք զարտօսր և ըզինտում,  
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկ տեղ հոգնենք մէկ տեղ ցանենք,  
Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,  
Ըկ հունձք բարեաց յերկինս հանենք.  
Որ կեանք առնուն այց դաշտեր:

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Մ. Պէշիկթաշլեան:

Պ Ա Բ Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ա Ց.

Ե զո'ւր են 'ի զո'ւր, բլոնաւոր,  
Բապտոնալիք քո ամենայն.  
Ոչ քո շըզթայք չ'են զօրաւոր  
Յընկճել զողիս մեր այկական:

Բզմարմին, միայն զայս մարմին  
Կարես գերել քե'ղ 'ի նախատ.

Սակայն ողիք մեր երկնային՝,  
Սիրտք ձայկազանց են միշտ ազա՛տ:

Եզա՛տ են, ազա՛տ մեր լեզուք,  
Մաղթել բզշանթս Երդարսւթեան  
Ի գլուխ ձեր, ո՞վ արիւնարբուք՝,  
Որ աւերէք ըդայաստան:

Ի դրժո՛խս անկցի՛ն թրշնամիք,  
Ընհետացին մինչ յաւիտեան.  
Կեցցե՛ն Նորքայ և ձայրենիք,  
Կեցցէ անմահ մեր ձայաստան:

Խորին Եպիսկոպոս Գալֆայիսն:

## 44

ԵՏՍԼ.01ՀՀՔ ԵՒ ԵՏՍԼ.03ԵՔ.

### I

Ինչո՞ւ, ինչո՞ւ Խտալացիք  
Չէ թնդում քաղցր երգեհոն,  
Ինչո՞ւ քնքուշ Խտալուհիք,  
Թաղել էք ձեր պիանօն:  
Մոռացել են դոքա, ասես  
Փափուկ սեռը կանացի.  
Սրանում վրէժ, կարիճի պէս  
Դիմումեն վրա նը ոսոխի.

Որսէս տան մէջ, նոյնապէս կոււում  
Կանգնած են հեղ և հպարա;  
Գնդակներին կուրծք են ուղղում,  
Եւ շրթունքից չէ փնում վարդ:

### II

Օ արմանումէք, ինչ ասումեմ:

Թաէ դուք նոցա տեսնէիք  
Խաղաղ օրափ, երբ քաղցրադէմ  
Բանած կիմառն գեղեցիկ,  
Փափուկ մատներն արծաթելար  
Նուագարանին դիալելով,  
Պարտէղի մէջ ծաղկադալար,—  
Դուք կլսէիք անխռով  
Սիրոյ ձայնը, սիրոյ հոգին,  
Ճիւսած օրափ թելերից.  
Սիրել դիտէ Խտալուհին,  
Օքոււած բոլոր աշխարհից:

### III

Շուրջ ճակատով շուշանագեղ

Օ ածանվումեն թուխ մաղեք,  
Աւ սաթի պէս յօնքեր շքեղ,  
Ա առ աստղի ջսլատ աչեր:  
Դուք լսեցէք, երբ զըռշումեն,  
Եմբողջ դրախտ փափկաւթեան  
Չեր որտերը կախարդումեն

Որպէս տաւիղը Խօլեան:  
Եւ ոսխի գոռող հոգին  
Միթէ չը պէտքէ նուածի,  
Եւ յաղթութեան արմաւենին  
Դոցա առջեւ տարածուի:

## IV

Խտալուհիք, և ձեզ նման  
Արեւելքում մի անզամ,  
Չեր քոյրերը զինուորեցան  
Թշնամու դէմ անզգամ:  
Արեան գնով այսասանին  
Գնեցին նոքա փրկութիւն,  
Եւ թաղեցին հողի ծոցին  
Ընմեղ ծաղկած կուսութիւն;  
Մեռան նոքա, բայց կ'մեռնի  
Սոցա գործի յաղթանակ:  
Դուք դէպ ՚ի դաշտ, մեք կենդանի  
Ունինք նոցա յիշատակ:

## III

Խտա լիա, աշխարհ փառքի,  
Դու, քո կուրծքը զրահով  
Ամրապնդած, յաղթանակի  
Ասմիս պսակուել դափնիքով,  
Միթէ իսպառ պէտքէ ձնշվի  
Այդ ազգային զօրութիւն,

## V

Եւ առուի պէս արիւնդ թափվի,  
Ներսներիդ սուրբ արիւն:  
Միթէ ձեռներն, միթէ սրեր  
Քո ոխերիմ թշնամու  
Պէտք է բերեն քեզ նոր աւեր:  
Եւ ստրկանաս դարձեալ դու:

## VI

Խնձ ասացէք, ո՞վ ձեզանից,  
Որի մէջ մարդու սիրտ կայ,  
Չիսեղզուելով արտասուքից,  
Կարող է մնալ անզգայ,  
Տեսանելով այս ողբալի  
Սրածութեան աւերած,  
Եւ սրբութիւնն Խտալիայի  
Նշաւակով անարգած:  
Ենիծումեմ չար ժամանակ,  
Երբ Շուրբօնը գիշատիչ  
Տնկեց այստեղ իւր դրօշակ  
Եւ խաբերայ և մատնիչ:

## VII

Ո՞ի կամք, մի շունչ ձեզ օգնական:  
Առէք սուսեր—և յառաջ,  
Դուք սիրտ ունիք ասպետական,  
Յարձակուեցէք ձախ ու աջ:  
Եզնիւ գործին ինքը Աստուած

Ո՛՛՛, ո՛՛, ծերունոյս կ'սկծանաց:

Ուր են իմ արգանդածինք,

Որոց ջանթեցին իմ ստինք

Օր օր քնա-երգն մոռացան

Կւրեանց մօր երկունքն ուրացան.

Ո՛՛, ո՛՛, յոյսերս ունայնացան:

Ուր են իմ բնիկ կրօն ու ծէս

Որով հանդերձեցի ձեռլ:

Սուրբ աւանդս անարդեցիք,

Ըղանդներով պատուասեցիք,

Ո՛՛, ո՛՛, մինչ անդո՞ւ ժառանդեցիք:

Եղեմական բառբառու

Վ արժեցին ունկդ սիրով

Եյժմ այութեան մթնոլորդն

Պղծումէ քո խորթ կոկորդն.

Ո՛՛, ո՛՛, գուշակում քո կորուստդ:

Բարքն ու վարքն իմ սէրիս

Օրինակ էք աշխարհիս,

Եյժմ իրթուելակ էք դարձել

Յիշոցի անունն էք ստացել

Ո՛՛, ո՛՛, իմ վախճան մերձեցել

### VIII

Եւ անցածիդ գեղեցկութիւն  
Եւր դագաղեց կ'զարթնի,  
Մ'իայն աւել և պղծութիւն  
Եւստրիան կրնդունի;  
Ետալիա', դու գօրաւոր,  
Եւ կեցցե՛ն քո զաւակներ,  
Ետալիա', ես հոգեւոր  
Տերումեմ քեզ իմ ապղեր,  
Եւ Հայի մեջ կայ կենդանի,  
Եզառութեան արձագանդ;  
Եւ թո՛ղ չասեն, որ Հայն չունի  
Ո՛չ աղատ կամք և ո՛չ կետնք:

### 42

Լսի՛ր մանուկ Հայաստան,  
Օներ մասեաց ողբերդութեան

Ընտանի ոսոխ Պարսիկը  
Աչա պՃնելէ իւր մահիճը.  
Ո՛հ. ո՛հ, դրօշակիս արծուիկը:

Մ. Փ.

43

ՔՈՒՐՄԵՐՈՒ Ա. Դ. Օ Թ. Ք.

Լոփ'ր քաջդ վահան, մեր դիք այսպէս կամին,  
Որ դու շուտով դարձնես այերն իրանց գէնից  
և օրէնքից:

Լոփ'ր Շապուհի կամքն էսպէս է որ մինչեւ չառ-  
նես նորա հրաման,  
Ենեղծ անդրդուելի, չես հասանիլ քո մեծ փափա-  
զին

Եւ արժան չես լինիլ այկական թագին:

Եյդ բան միայն կլինի այն ժամանակ,

Երբ այաստան կլինի մեր հպատակ

Եւ Յոյներից հեռի մնալով, կլինի մեղ միշտ

Գենակից և միշտ դաշնակից:

Գ. Ս.

ԵՐԳ ԵՐԵԽԱՑԻՑ

44

Լուսացաւ, լուսացաւ,  
Լուսն է բարին,

Օփտն է ծառին, զի՞ն և սիօնի  
Հան է թառին,  
Օսյլ մարդու քունը տանի  
Ըշնատաւոր վերկաց բանի,  
Երկնքի դոներըն բաց էր,  
Ոսկէ աթուալն զըրած էր,  
Քրիստոսը վըրէն նըստածէր.  
Լուսաւորիչը կանգնած էր,  
Ոսկէ զրիչն բըռնած էր.  
Մեծ ու պսախկ գըրում էին,  
Երդարները խաղում էին:  
Մեղաւորները լալիս էին,

45

Խարոյկ սիրոյ սուրբ հայրենեաց  
Վառի յիմ սիրտ և 'ի լանջ.  
Եքնար և տաւիդ երգ սիրալիր  
Տօնել զայս ժամ աւետարեր:  
Ով գուք այ երամք, մանկունք Երամեան,  
Ուրախ լերուք ընդ իս միաբան,  
Փութացուք, օն փութացուք  
Զայն տալյանձուկ 'ի յԱնի  
Եւ ասացուք յերիք լայ,  
Օկ ազգ իւր այժմ յոտին կայ,  
Դասք սրբազնք ովուապետաց  
Տանց այոց են պաշտպան քաջ.  
Մոքօք խնդամք օր և կենաց

Կրօնիս և մեր ազգութեան  
Եռքա անքուն պահապան:  
Արարատ և Մասիս  
Զայնակից մեղ լիցին,  
Օրշնութիւն մեր վերայ  
Մինչյեթերս բարձրացին,  
Իմ սիրուն Հայաստան  
Ողջ կեցցէ յարաժամ  
Յորդեսցին և փառք իւր  
Դարուց՝ ի դարս անխափան:

46

ԵՐԳ. ՊԱՇՎՈՒԽՏ ՊԱՏՍՆԵԿԻ

Օփծեռնակ, ծիծեռնակ,  
Դու գարնան սիրուն թըռչնակ,  
Դէպի ո՞ւր, ինձ ասա,  
Թըռչումես այդպէս արագ:

Ա՞ն, թըռիր, ծիծեռնակ,  
Օքնած տեղըս Աշտարակ,  
Ենդ շինի՞ր քո բունը  
Հայրենի կըտուրի տակ:

Անդ հեռու ալեոր  
Հայր ունիմ սրգաւոր,  
Որ միակ իւր որդուն  
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա,  
Խնձնից շատ բարեւ արա,  
Ըստ, թող նըստի լայ  
Խւր անբաղդ որդու վըրայ:

Դու պատմէ թէ ինչչէս  
Ըստ անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով  
Կեանքս մաշուել եղել կէս:

Ինձ համար ցերեկը  
Մութ է շրջում արեգը,  
Գիշերը թաց աչքիս  
Քունը մօտ չի գալիս:

Ասիր, որ չի բացուած  
Թառամեցայ միացած,  
Ես ծաղիկ գեղեցիկ՝  
Հայրենի հողից զրկած:

Դէ՛շ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացի՛ր, թոփիր արագ,  
Դէպ ՚ի Հայոց երկիրը.  
Օքնած տեղս—Աշտարակ:

47

ՑԱՀԱՐՑԱՐ

Օազեա՛ հեղիկ արեւ քաղցրիկ,  
Օլյս պայծառ քո գեղեցիկ:

Օկ ճեմեսցէ արքայ Հզօր,  
Մեր Յաղիերտ պերձ փառաւոր:

Դու թագաւոր այլ ազգական,  
Ըստ ծաներուք մեր տէր իշխան:

Սմա վայել է փառք և պատիւ,  
Սա հաւասար դից դերադնիւ:

Օաղկեսցի քո տէր պատուական,  
Եթոռ և սուր և գաւազան:

ԿՈՌԻՆ Կ.

Կոռնկ գալնան աւետիս,  
Երամդ ո՞ր աշխարհից,  
Լուր չունիս պանդխտիս,  
Մեր հայրենի գաւառից:  
Ո՞վ գաղթական թռչուն  
Խօր տխուր ես իրկուում,  
Գիտեմ փոփոխութիւնդ,  
Ճանապարհդ ես նշմարում:  
Ել չես տեսնի ծաղկած,  
Հայաստանի դաշտերը,  
Եւ անտառներով ծածկած  
Նրա սրբազն սարերը:

Դէ, թոիր կռունկ շքջեր  
Երկրիս ամեն անկիւնը,  
Եւ այսց ազգին յիշեր  
Խւրեանց նախնեաց արիւնը:

Մ. Փ.

ԵՐԳ ՅԱՂԹԱԿԱՆ 1).

Կեցցէ Շապոհ, կեցցէ արքայ,  
Փառաց նա միշտ օրեր տեսնայ.  
Կեցցէ օրուան այս յաղթութեամբ  
Եւ իբր արե փայլի անամբ:

Իւր թշնամիք փախչին հապճեալ  
Իբրև ըզմէզ լուսոյն հանդէպ.  
Եւ տարածի իւր զօրութիւն  
Ցոր վայր վազեն նրշոյլք արփւոյն:

Քեզի նման, Մազդեզա՞նց քաջ,  
Չեղաւ հզօր ոչ ոք յառաջ,  
Եւ ոչ յետոյ իսկ ոչ երբէք  
Լիցի յԵրիս և ոչ ուրեք:

1) Այս երգը առնուած է Արշակ Բ. ողբերգութիւնից,

Կեցէ Ըապուհ, կեցէ արքայ,  
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,  
Եւ տիրասէր զօրս իւր՝ ըդՊարս՝  
Իւր հետ տանի փառաց 'ի փառս:

50 1)

\* \*

Կեցես գու Ըապուհ, կեցես արքայ,  
Քեզ փառք յաղթութեան ամեն տեղ միշտ կար.  
Քեզնից դողում էր ողջ Յունաստանը  
Ոտի տակ ընկաւ այսօր Քուշանը.  
Դէ՛, քաջ Պարս եղեարք կեցէ՛, կանչեցէ՛ք.  
Մեր վեհ մազդ եղանց փառքն աւելցրէ՛ք:  
Կեցէ՛, կեցէ՛, կեցէ՛ միշտ  
Ըապուհ և իւր զօրութիւն:

Ենմահ Որմիզդը քեզ մեղ պարգևեց,  
Քո ահից սուրբ նա ինքը սըրեց  
Փշը թշնամեաց ջնջել օտար դէն,  
Ծշարհս բոլոր առնել Պարսկադէն.  
Դու քո քաջութեամբ անմահ դից հաւասար  
Տուիր մեղ խրախոյս յաղթել քաջաբար:  
Կեցէ՛ . . . և այլն:

1) Այս երգը վերաբերվումէ պարսից Շապուհ արքային - և  
երգուեցաւ մոդերի բերանով «Վարդան մամիկոնեան պիեսայի մէջ»:

Եւ Տէրն Արշակունեաց Անոյշ բերդի մէջ  
Պէտք է փշանայ դառն վշտի մէջ.  
Յաղթութեան դռները անմահից շնորհօք  
Շվամ են առջեղ վեհապանձ փառօք.  
Դէ՛, քաջ զօրու եղեարք կեցէ՛ կանչեցէ՛ք,  
Մեր արքայն Ըապուհ դիւցազանց ասէ՛ք:

Կեցէ՛ . . . և այլն:

51

\* \*

Կեցես քաջ Սամէլ, փառքու պարծանք այ անուան.  
Կեցես քաջ Սամէլ գու ես մի միայն  
Փրկիչ տան այկազեան:  
Դու որ ուրացող խարդախ քո հօրից  
Վրէժ առնել պատրաստ ես,  
Քեզ միայն՝ քեզ միայն փառք այկազունք կտամք,  
Քեզ դարէդար յաւիտեան:  
Կեցես քաջ Սամէլ, փառք ու պարծանք այ անուան.

Եյդ մեծ քաջութիւն վեհ անունդ կ'պսակէ,  
Եյդ ջերմ հաւատը քեզ կ'պահպանէ  
Եւ կ'զօրացնէ, գիտենք իսկապէս  
Թաէ քաջ այի պէս նահատակ կ'դառնաս.  
Ուսաի քեզ միայն փառք այկազունքս կտանք,  
Քեզ դարէդար յաւիտեան:  
Կեցես քաջ Սամէլ . . . և այլն

Ահա' երկնքից մեր սուրբ հարքը նայում են  
 Եւ լոյս պոտկը դիմիդ բռնելով  
 Քեզ քաջալերում են, դու որ քաջ Սամէլ  
 Սուրը ձեռքդ առած, քեզ պաշտպան ես կեցած,  
 Մ'ենք էլ քեզ մի այն փառք եռանդիամբք կտանք,  
 Քեզ դարձեղար յաւիտեան:  
 Ակցցես քաջ Սամէլ... և այլն:

Արիդ մեր քաջ Սամէլ Մամիկոնեան քաջ տոհմի,  
 Յարուցո՛ մեր մէջ քեզ նման քաջ ողի,  
 Որ մեզ էլ ազատի:  
 Դու որ ուրացող գաւաճան Ա ահանի  
 Վ ոէժ առնել պատրաստ ես,  
 Քեզ միայն, քեզ միայն փառք Հայկազունք պիտի  
 Տան դարձեղար յաւիտեան:  
 Ակցցես քաջ Սամէլ... և այլն:

52

ԵՐԳ ՈՒՍՈՅ<sup>(1)</sup>.

Հ ա' պա քաջազունք,  
 Հ այո՛ց զաւակունք,  
 Ը ու ք աղեղունք  
 Ւ մահ երազունք:

Անտառք ըսպասեն  
 Կենդանիք սարսեն  
 Օ խնուցդ ՚ի ձայնէն.  
 Շ եշտակի նետեր  
 Թափեցեք քաջեր  
 Յերէս անվեհէր:

Վ աղեմք ուր վրտանդ,  
 Ե յս մեր ըզբօսանք.  
 Ո րսոց արշաւանք,  
 Մ արտի՛ց են կըրթանք:  
 Ե րթա՛մք գունդ ՚ի գունդ,  
 Յ աղեղ և մըկունդ,  
 Յ ուսով սըրտաթունդ.  
 Շ ամիկրե՛մք կենդանիս,  
 Ւ րը ըզթշնամիս  
 Ւ մեր հայրենիս:

Օ կ օր մ'ալ նոյնպէս  
 Մ արտին ՚ի հանդէս՝  
 Օ արնեմք մահազգեաց  
 Օ սոսիս հայրենեաց.  
 Ե ւ յաղթանակաւ  
 Լ ոցեալ աւարաւ,  
 Դ առնամք քաջարշաւ.  
 Ե ւ ՚ի մեր դափնիք  
 Օ ա՛փ տան սիրելիք,  
 Պ անծան հայրենիք:

1) Այս երգը առնուածէ Արշակ Բ աղերդութիւնից:

\* \*

Հայաստան,  
Դու օրօրոց մեր մանկութեան,  
Պէտք է տան  
Կիեզ կեանք որդիք Արարատեան,  
Վասն զի մեր գոյութեամբն  
Եւ վայելած բարութեամբն  
Միմիայն քեզ եմք երախտապարտ,  
Վո անուամբ եմք մենք միայն հպարտ:

Այս որդոյն  
Եշխարհ անաթեմա կարդայ,  
Ով որ թոյն  
Հայրենեաց վարձարութիւն տայ  
Փոխարէն այն անոյշ կաթին,  
Որով սնոյց նրան մայրենի ստինդ,  
Յուսով թէ երբ վտանգ սպառնայ  
Օնողաց խնամքն չմոռանաս:

Իսպանդակ  
Միրոյ կենդրօն հայրենիքն է,  
Կապատակ  
Մարդկային կոչման նա ինքն է.  
Առանց նորան կեանքն մահ է,  
Փառքն ու մամնայն ունայն է.  
Օռոր խնդրեմ արդ երջանկութիւն  
Միայն ազգիս սէրն է հաստատուն:

\* \*

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,  
Թռչում եմ դէպ ՚ի քեզ, հոգւովս անդադար:  
Բայց աւաղ այս բանտում փակուած եմ անտես,  
Պատերազմի դաշտում չեմ կրվում և ես:  
Հանապազ տանջուեցայ քո ճակատազրով  
Սրտումն շղթաների ձայներ կրելով:  
Եթ քո ազատութիւնը փոթորկի մէջ է,  
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է:  
Չգիտեմ թէ ինչպէս կոիւն ընթանում  
Ես չունիմ մի լուր, բայց լուրն է թռչում  
Քաջ ընկերներով հեշտ է ինձ կոռուել,  
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանել:  
Ստանում եմ միշտ համբաւ սպանութեան ահեղ  
Թռափումէ ազգ արիւն, բայց ես չեմ այնտեղ  
Կ'փշում իմ շղթայս, կ'ելնեմ այս բանտից  
Սրբել դառն արտասուք քո մէզ աշերից  
Բայց աւաղ այս բանտում փակուած եմ անտես,  
Պատերազմի դաշտում չեմ կրվում և ես:  
Թռղ այստեղ չարչարուեմ անծանօթ կապուած,  
Միայն քեզ Հայրենիք, տեսնեմ ազատուած:

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,  
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.

Թառամում եմ ես այս օտար երկրումը,  
 Մենակ բըսած ձաղիկ նըման դաշտումը:  
 Կամաց կամաց տարիները անցնում են,  
 Մեղնորդած գարուն, ամառ գարճնում են,  
 Միայն իմ խեղճ կեանքը չո՛ւնի ոչինչ նոր,  
 Ինձ երեկը կըրկնում է միշտ այսօր:  
 Սպարիզիս նեղ է ճամբան ու փըշոտ,  
 Խեղջութիւնս համարում են ինձ ամօթ.  
 Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չո՛ւնի,  
 «Դա, ասում են, իր կեանքումը գարդ չո՛ւնի»:  
 —Ես գարդ ունիմ, գարդը մեծ է ու պէս պէս,  
 Բայց չ'են տեսնում ձեր աչքերը կարճատես,—  
 Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,  
 Քանի բոահ բաղդը ժրպտաց ինձ պայծառ:  
 Հա՛, ասացի, գարձել է իմ անիւր,  
 Լորացել է իմ վատ բաղդի չար թիւր:  
 Յանկարծ փշեց ան տուրծելի հիւսիսին  
 Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին:  
 Ըստէս չորցուց իմ նազելի հասակը,  
 Իմ անողորմ, անագորյն վիճակը:  
 Եխ, մօտեցիր օրհասական օր մահուան,  
 Բե՛ր քու հետը սե հող ու նեղ զերեզման.  
 Թո՞ւ սառ լինի իմ նոր տանը յատակը,  
 Օանըր քար է վրէս ծածկած վերմակը:  
 Բայց, աշխ, երբոր կ'անցնի ամիս ու տարի,  
 Կը մամառտի գերեզմանը այն քարի,  
 Հետքը անգամ չի մընալու իմ խաչին.  
 Իմ անունը իմ յիշատակ—կը կորչին.  
 Բայց կ'ուղէի թողնել այս տեղ մի արձան,

Որ զարէ գար մընար, ամուր անկործան,  
 Ես երգեցի երգ ոլորուն ու անույշ,  
 Իմ քնարի ձայնն էր մեզմիկ ու քընքոյշ.  
 Միջթէ այնքան անդութ կ'լինի Լետա գետ,  
 Որ անունըս անգամ կ'անէ նա անչետ:

Ա. Տ.—Գ. Պատկանեան:

## 56

ԵՐԳ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ \*).

Հուր բարկութեան համայն Հայոց.  
 Բորբոքեալ զերդ բոց բարկաճաթ.  
 Ու կայծականցըս բիւր բիւրոց,  
 Զարթոյց ՚ի մարտ սարս սառնապատ  
 Զե՞ վարանիմք արդ աստ եղարք,  
 Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.  
 Ձեռամբ յարտազ աղմուտ օ՞ն զրոյդ, ՚ի զրոյդ  
 Ե զրոյդ թուչիմք սլանամք, սլանամք, սլանամք:  
 Հուր զէն ՚ի ձեռին  
 Եւ վրէժ ահազին  
 Սպասեն և կան  
 Քաջք Արշակունեան

\* ) Այս երգը առնուած է Վարդանանց պատերազմի ողբերգութիւնից:

Եւ յոր երկինք հանդիսատես  
 Օաշխոյժ նախնեաց հեղու ՚ի մեզ  
 ։ ապ օ՞ն քաջք քաջաց  
 Ընդ Ասան կուրծս  
 Միսեսցուք մկունս  
 Ուժգին ՚ի հարուած:

Ո. Աէտէֆմեան:

Երգ Ի Գէլս ՔԱԶԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ.

։ այրենասէր Արամեանք,  
 Օք կայք ՚ի քուն ընկոմեալ,  
 Բացէք զաւս ձեր հոգեկան,  
 Տեսէք զօրս ձեր ժամանեալ:

Ուր են փառք, ձիր ձեր նախնեաց,  
 Ուր են պատիւ վեհ արանց,  
 Որք զաշխարհ ։ այսատանեաց  
 Լցին փառօք դիւցազանց:

Յառաջ մատիք ինձ լսել,  
 Հառաւիդք քաջին ։ այիսյ,  
 Ես կամիմ ձեզ արդ պատմել  
 Օազգասէր դործ Ա արդանայ:

Որ զզլուխ իւր կենօք չափ  
 Եդ ՚ի փրբկանս իւր ազգի,  
 Եւ կընքեալ զայն իւր արեամբ՝  
 Եղեւ փրբկիչ հայրենի:

Սուրբ խաչ փայլեաց Փրկչական,  
 ։ ոգւոց ազգիս ։ այկական.  
 Պահեա զմեղ Տէր Աստուած  
 Եւ աշխարհիս փորձանաց:

Լուսաւորեաց ։ այսատան,  
 Լուսով խաչին փրկչական.  
 Ենեա աշխարհ ամենայն  
 Օփող մեծի աւետման:

Բարձրացիր արդ Արարատ,  
 ՊՃնեալ ծաղկօք զքոյդ գագաթ.  
 Եզզիս ։ այսց խնդութեան,  
 Լեր դու վկայ յաւիտեան:

Ո. Ո. Հ. Յ. Ա. Ս. Ա. Կ.

։ այսատան երկիր զբախտավայր,  
 Դու մարդկայնց ցեղիս որրան,  
 Դու և բնիկ իմ հայրենիք,  
 ։ այսատան, ։ այսատան, ։ այսատան:

Ւ վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ  
